«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Մեծ Մասրիկ,
փ.8, N 1, փ/դ՝ 1618, mmasrik@schools.am

№ 2
5 փետրվար 2020

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ.ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սանոսյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ կազմակերպության խորհուրդը 2020 թվականի փետրվարի 4-ի արտահերթ նիստում որոշում է ընդունել կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

Կից ներկայացնում եմ խորհրդի որոշման քաղվածքը և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Խորհրդի նախագահի պարտականություններ կատարող՝

_____ Լ.Հակոբյան

ՈՐՈՇՄԱՆ ՔԱՂՎԱԾՔ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2020. փետրվարի 4-ին կայացած նիստի
№ 3 արձանագրությունից

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

/Զեկուցող՝ խորհրդի նախագահի պարտականությունները կատարող Լ.Հակոբյան/

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ կետի 2-րդ ենթակետի, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 6.1-րդ, 7-րդ և 8-րդ կետերի, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 33-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ խորհուրդը ***որոշում է.***

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարել մրցույթ:
2. Հաստատել կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել հնգօրյա պարբերականությամբ «Գեղամա» հեռուստաընկերությամբ՝ երկու անգամ՝ 2020թ. մարտի 13-ին և մարտի 18-ին:
   Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել նաև azdarar.am կայքում՝ ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի N 174-Ն որոշմամբ սահմանված կարգով:
4. Կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ սույն որոշման 3-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը տրամադրել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու համար:
5. Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունել 2020թ. մարտի 18-ից մինչև ապրիլի 16-ը ներառյալ:
6. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /փաստաթղթերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի անդամներ Լ.Հակոբյանի և Ս.Պողոսյանի վրա:
7. Մրցույթն անցկացնել կազմակերպության շենքում, այդ նպատակի համար առանձնացված սենյակում, 2020թ. ապրիլի 28-ին, ժամը 14.00-ին:
8. Հանձնարարել խորհրդի նախագահի պարտականությունները կատարողին կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին խորհրդի սույն որոշման պատճենը և հայտարարության տեքստը սահմանված ժամկետում, պատշաճ կարգով և պաշտոնական գրությամբ ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Գեղարքունիքի մարզպետին կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին որոշման պատճենը ներկայացնելու օրվանից, հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Գեղարքունիքի մարզպետի կողմից խորհրդին գրավոր առարկություններ և առաջարկություններ չներկայացվելու օրից:

Նիստի նախագահի պարտականությունները կատարող՝
_____ Լ.Հակոբյան
Նիստի քարտուղար՝ _____ Ս.Պողոսյան

«Իսկականի հետ ճիշտ է»՝

Տնօրենի ժ/պ՝ _____ *Շ.Խլոյան*

4 փետրվար 2020

Հավելված
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց»
պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի
2020թ. փետրվարի 4-ի որոշման 2-րդ կետի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարում է մրցույթ:

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր տեղի համար ընտրության համար անցկացվող մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք ունեն՝
   1) Բարձրագույն կրթություն,
   2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր):
2. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
   1) Դիմում՝ կազմակերպության խորհրդի նախագահի անունով.
   2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը.
   3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
   4) Տվյալ կազմակերպության զարգացման ծրագիրը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն 3 օր առաջ).
   5) Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը (դրանց առկայության դեպքում).
   6) Աշխատանքային գրքույկի պատճենը:
3. Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը՝ բնօրինակներով) ներկայացնել 2020թ. մարտի 18-ից մինչև ապրիլի 16-ը ներառյալ, ժամը 9.00-ից մինչև 15.00, բացի շաբաթ և կիրակի օրերից, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդին: Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Մեծ Մասրիկ, փ.4, ն.5, N 4 /տարրական դպրոցի շենք/, հեռ. 077965977, էլ.հասցե՝ metsmasrikhmd@schools.am:
4. Մրցույթը տեղի կունենա 2020թ. ապրիլի 28-ին, ժամը 14.00-ին, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

Խորհրդի քարտուղար՝ _____ Ս.Պողոսյան

«Իսկականի հետ ճիշտ է»՝

Տնօրենի ժ/պ՝ _____ *Շ.Խլոյան*

4 փետրվար 2020